

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱԺԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԳԻՏԱԿԱՆ
ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆՅՈՒԹԵՐ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1975

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ Р. АЧАРЯНА
МАТЕРИАЛЫ НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ

Издательство АН Арм. ССР Ереван 1975

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Բազմիմաստությունը և համանունությունը լեզվի արտահայտություն և բովանդակության պլանների փոխարարությունները բացահայտող լեզվական ներույթներից են, որոնք որոշվում են լեզվի համաժամանակյա կտրվածքում: Բազմիմաստության և համանունության տարբերակումը առաջօր լեզվաբանության՝ վերջնականապես չլուծված և վիճարանությունների տեղիք տվող հարցերից է:

2. Բերականական ձևայիններն ու բառաձևերն ունեն այն առանձնահատկությունը, որ արտահայտության պլանի մեկ ձևին բովանդակության պլանում սովորաբար համապատասխանում է քերականական իմաստների խումբ: Ըստ որում ինչպես բառական մեկաբանություն, այնպես էլ այստեղ, շնայած նշանակելի և նշանակելիի, որպես լեզվի ներկու կողմերի միասնությունը, նրանց միջև չկա ուղղագիծ հարաբերակցություն: Հաճախ նույն նշանակելի արտահայտած տարբեր իմաստների միջև կարող է լինել իմաստային կապ համաժամանակյա կտրվածքում, կարող է այդպիսի կապը միայն պատմականորեն վերականգնվել, իսկ հաճախ այդպիսի կապ չի կարելի գտնել: Առաջին դեպքում մենք գործ ունենք բազմիմաստություն, մյուս դեպքերում՝ համանունություն ներույթի հետ:

3. Բերականական բազմիմաստության դեպքում, մենք ունենք նույն ձևայինը կամ բառաձևը, որ կարող է արտահայտել տարբեր իմաստներ, իսկ համանունության դեպքում համաժամանակյա կտրվածքում գործառնում են տարբեր ձևայիններ, որոնք ձևով համընկնելով արտահայտության պլանում, բոլորովին տարբեր են բովանդակության պլանում:



4. Բերականական բազմիմաստութիւնը և համեմունութիւնը տարբերակելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել քերականական ձևերի /ձևույթներ, բառաձևեր, շարահարկական կապակցութիւններ/ հարացույցային և շարակարգային կապերը, նրանց գործառութիւնն ու լորտները:

5. Եթե տվյալ քերականական ձևը հանդես է գալիս հարացուցային նույն տեղում՝ արտահայտելով քերականական մի քանի իմաստներ, որոնք հիմնականում պահպանվում են շարակարգային հարաբերութիւններում, գործառութիւնն մեջ, ապա առկա է բազմիմաստութիւնն երևույթը:

6. Եթե քերականական նույն ձևը երևան է գալիս տարբեր հարացույցներում կամ միևնույն հարացույցի տարբեր ենթահարացույցներում, ունի շարակարգային տարբեր կապեր և իմաստային ու գործառական տարբեր ոլորտներ, առկա է համեմունութիւնն երևույթը:

7. Բերականական բազմիմաստութիւն և համեմունութիւն տարբերման չափանիշ են նաև այն համեմիշական կապերը, որոնց մեջ մտնում է տվյալ ձևը: Եթե տվյալ ձևը միևնույն համեմիշական շարքում արտահայտում է մի քանի իմաստներ, որոնք հատուկ են նաև համեմիշական շարքի մյուս անդամներին, առկա է բազմիմաստութիւնն երևույթը: Իսկ եթե տվյալ ձևը մտնում է երկու կամ ավելի համեմիշական շարքերի մեջ՝ յուրաքանչյուրում արտահայտելով բոլորովին տարբեր իմաստ կամ իմաստներ, առկա է համեմունութիւնն երևույթը:

Բ. ՂԱՐԱԳԱՅՈՒՆՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՎԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՅԻՆ ԳԵՎԵՐԻ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Նորմավորման նպատակներով լեզու են ուսումնասիրելիս առաջին հերթին քննութիւնն առարկա են դառնում լեզվի զուգահեռութիւնն-

ները: Լեզվի նկարագրական քերականություններում /գիտական և գործ-
նական/ գրական լեզվի զուգահեռ ձևերը սովորաբար միայն օրյակտի-
վորեն նկարագրվում են, իսկ թե ղրանցից յուրաքանչյուրը ինչ
տրոհք ունի լեզվի զարգացման տվյալ փուլում և ինչ ղեր է կատարում,
տարածման և կիրառության ինչ ուղորտներ ունի, իմաստային, ճակատ
ինչ նրբերանգներ կամ առանձնահատկություններ, այս տիպի աշխա-
տանքներում, բնականաբար, հատուկ ուշադրության և քննության
առարկա չեն դառնում: Մինչդեռ լեզվի նորմավորման և խոսքի մշակույթ-
թի համար հենց այս հարցերն են, որ առանձնահատուկ կարևորություն
են ստանում:

Լեզվի նորմավորման համար նախ և առաջ անհրաժեշտ է բոլոր
մեկերդակներում հանդես եկող տարբերակային ձևերի գործառություն-
ների նպատակադիր ուսումնասիրությունը:

2. Տարբերակների կամ զուգահեռությունների դոյությունը լե-
զուներում օրինաչափակա է և անխափան: Տարբերակյաությունը
հատուկ է նաև նորմայի մեկերդակին, քանի որ լեզվի ամեն մի զարգա-
ցում ենթադրում է հավասարակիս դոյակցող տարբերի ազակություն:

3: Ժամանակակից հայերենում երևան եկող տարբերակային
ձևերը կարելի է բաժանել երկու խմբի՝ կանոնական և ոչ կանոնական:
Կանոնական տարբերակային ձևերը իրենց հերթին կարող են լինել
համազոր /տղատ/ և ոչ--համազոր:

4. Համազոր տարբերակները հայերենում տարբեր բնույթի են և
կարող են լինել՝ հնչյունական--աբրատական, բառային--հնչյունական,
բառային--բառակազմական, բառային--ձևաբանական, ձևաբանական--հնչյու-
նական, ձևաբանական, շարահյուսական--ձևաբանական և այլն:

5. Ոչ համազոր կանոնական տարբերակները սովորաբար ունենում

են իմաստային, ճանկան նրբերանգներ, էլիտառության և տարածման համապատասխան ուղորտներ, կապակցեցնելու թիվ տարրեր չափանիշներ։
Լեզվի նորմավորման տեսակետից հենց այս կարգի տարրերակներն են որ կարիք ունեն հետուկ քննության և համապատասխան գնահատության։

6. Ոչ կանոնական /մեծ մասամբ պատմական բնույթի/ տարրերակները քննարկելի են միայն համապատասխան ոճում, որոշակի նպատակադրումով։ Ոչ կանոնական, բայց համապատասխան ոճում քննարկելի տարրերակները իրենց բնույթով տարրեր են։

7. Խոսքի մշակութային համար նշանակություն ունի տարրերակային իրողությունների վերլուծությունը և բերու մոտեցում, հարց ուղեային և շարակարգային, որոնցով պայմանավորված է լեզվում բառագործածման թիվների և բառերի անհամապատասխան կապակցման վրաստների հայտնաբերումը։

Հ.Գ. ՀԱՅՈՐԱՅԱՆ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

ՄԻ ԲԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Գեղարվեստական տեքստի ճանաչությունը բնագավառում առանձնացվում է նրեք հիմնական ուղղություն* 1. հեղինակային անհատական ոճի յուրահատկությունների բացահայտում, երբ տեքստի ճանաչական վերլուծությունը կապվում է սովորական տեքստում սրբաբանական-իմաստաբանական և զգացական ինֆորմացիաների հղորդման լեզվական միջոցների նպատակահարմար օգտագործման հետ։ 2. Ոճի օբյեկտիվ քննություն* ճանվիճակագրություն, երբ տեքստի վիճակագրական բնութագրումը լրացնում է ճանաչման թիվությանը անհամապատասխան բնագավառում հայեցակետը։

3. Ոճի անդգնությունն ամենաբարձրումը ընկալողի համար. Եւ հոգւոր-
արտահայտական առումով որոշակիորեն ձևավորված տեքստի հաջորդա-
կցական գործառնության քննությունն է:

Երեք ուղղությունն էլ չափազանց կտրուկ են գեղարվեստական
տեքստի ուսումնասիրության համար և լրացնում են իրար:

Զեկուցման մեջ շոշափող հարցերը պերաբերում են ոճաբանու-
թյան առաջին ուղղություն: Նշենք որոշ կանխադրություններ, որոնց վրա
հենվում ենք:

1. Հեղական ոճը ընդհանրապես և մասնավորապես խոսքարվեստում
առաջին հերթին, բացի ոչ միայն, կապվում է բնագործածության հետ:

2. Բնագործածությունը բառայությունի նպատակադիր-միտումնավոր
ընտրությունն է:

3. Ընտրության սկզբունքն ունի գիտակցական բնույթ, որի
հետևանքով ոճն ստեղծվում է գնահատողական, վերաբերմունքային արժեք:

4. Գեղարվեստական տեքստը բազմաթիվ է իմաստակիր երեք
շերտից՝ ա/ բուն բովանդակային-գաղափարաբանական, բ/ ոճական- գե-
ղագիտական-զգացական, որ հենց գեղարվեստական ձևն է, և գ/ ենթա-
տեքստային:

5. Խոսքային պատկերավորության համակարգը կարելի է հանգեցնել
որոշ կարգի հակադրությունների:

6. Պատկերավորության համակարգը բազմաթիվ է ոճաբանական
զանազան շերտերից: Սրանց փոխադարձությունն պարզաբանումը ընդ-
հանուր գծերով կարող է ցույց տալ, թե ինչպե՞ս է ոչ-գեղարվեստա-
կան խոսքը փոխակերպվում, վերածվում գեղարվեստական խոսքի:

Այս հարցին կարող է պատասխանել ոճաբանության մի նոր
բնագավառ, որի համար առաջարկում ենք սերիզ ոճաբանություն տե-

վանումը: Առաջարկում ենք նաև մի մեթոդ, որը պայմանականորեն ան-
վանում ենք ոճական ետադարձ քաջասաման կամ պարզպես քաջասաման մե-
թոդ: Այս մեթոդը հետազոտություն է տալիս պատկերավորման աստի-
ճանական շերտավորումում ունեցող գեղարվեստական տեքստում, ճաբանա-
րեն նշանակիր երկանդամ կամ բազմանդամ տրված կառույցների որոշ բա-
ղադրիչների քաջասաման ճանապարհով, հասնելու ճաբանորեն ոչ-նշա-
նակիր՝ չեղոք տեքստի ստացմանը:

Բաջասաման մեթոդի գործադրումը հանկեցնում է մի գաղափարի,
որը փորձում ենք գնահատել որպես տեքստի ոճական աստիճանական
հագեցման կատեգորիա: Ցանկացած ծավալի ոչ-գեղարվեստական տեքստ
աստիճանաբար համապատասխան ոճական հագեցման հասնելուց հետո վերած-
վում է գեղարվեստական տեքստի:

Հայտնի է, որ գեղարվեստական պատկերավորություն համակարգում
գնահատողական, վերաբերումներային տկալվածությամբ առանձնանում են
որոշիչային և ձևիպարագայական, լայն առումով՝ մեկդիրային բնույթ-
գրումները, որոնք էլ մենք հեկված ենք դնելու տեքստի ոճական հա-
գեցման առաջին կամ ստորին աստիճաններում: Որոշիչը և ձևի պարագան
վերաբերումներային շարահյուսական կարգերին և կարող են ունենալ
ոճական հատկանշականություն նույնիսկ ոչ-մեկդիրային կիրառա-
թյուններում: Դրանք ճաբանորեն նշանակիր խոսքային միավորներ են
և գեղարվեստական տեքստում կատարում են ոճական գործառնություն:

Ձեկուցման մեջ բերվում են օրինակներ ցույց տալու համար,
թե որոշիչներն ու ձևի պարագաները ինչպես են ճաբանորեն հագեց-
նում տեքստը և գեղարվեստական պատկերի ձևավորման մեջ ինչ դեր
են խաղում:

Հ.Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐՔԱՎԵՐՈՒԹՅԱՆ ԱՏԼԱՍԻ ՆՅՈՒԹԵՐԻ

ՀԱՎԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հայ բարբառագիտության առաջնահերթ ու անհամաձայն խնդիրներինց մեկը հայ բարբառների լեզվաբանական ատլասի ստեղծումն է: Այդ խնդրի իրականացումը կտրուկ է ոչ միայն լեզվաբանական, այլև ընդհանուր՝ պատմա-մշակույթային առումով:

Հայերենի բարբառագիտական ատլասի /ՀԲԱ/ ստեղծման գործը ըսկըսելու համար առաջ արդեն կան բավարար նախադրյալներ ու բարենըպատ պայմաններ /թե տեսական, և թե գործնական տեսկետին/: Կուտակված է բավականին հարուստ փաստական նյութ, գրված են տեսական բնույթի հոդվածներ ու ուսումնասիրություններ, կատարված են ընդհանրացումներ, ուրվագծված են հայ բարբառների հիմնական տարրերուկիչ հատկաթիշները:

Այժմ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում որոշակի նախապարաստական աշխատանքներ են կատարվում այդ պարբերմի իրականացման ուղղությամբ: Այդ նախապարաստական աշխատանքների մեշ հիմնականը հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման Ծրագրի ստեղծումն է, որը հնարավորություն կտա անհրաժեշտ նյութերի հավաքումը կազմակերպել միասնական սկզբունքներով:

Ծրագրի միշնոցով նպատակ է գրվում պարզել, թե ի՞նչ տարածքներում են գործում հայ բարբառների լեզվական տարրերուկիչ հատկաթիշները: Հետևարար Ծրագիրն իր մեշ ընդգրկում է հայ բարբառները տարածականորեն բնութագրող հնշյունաբանական, քերականական ու բառային զուգարանություններ:

Զուգարանությունների ընտրությունը կատարված է այն հաշվով, որ դրանք լինեն համակարգային երևույթներ: Դա հնարավորություն

կտտ ճիշտ ներկայացնելու առանձին տարածքներում գործող օրինա-
չափությունները: Ոչ համակարգային երևույթները ընդգրկված են
այն չափով, ինչքանով որ նրանք ներկայանում են որպես որոշ
վայրերի ընդհանրական առանձնահատկություններ:

Մրագիրը բաղկացած է երեք մասից՝ իր մեջ համապատասխանաբար
ընդգրկելով հնչյունական, քերականական և բառային զուգաբանություն-
ներ:

Հնչյունաբանական զուգաբանությունները, որոնք ձևակերպված
են շուրջ 100 կետերի տակ, պարունակում են հնչույթաբանական,
պատմական ու փոխադրեցական հնչյունափոխություն մի շարք երևույթներ,
որոնք տիպական են և մեծ, և փոքր տարածքների բարբառների համար
և որպես այդպիսի՝ բարբառային միավորների /խոսվածքների/, բարբառ-
ների, ենթաբարբառների, բարբառախմբերի ու միջբարբառախմբերի/ ստո-
րակարգություն չափանիշներ կտրուկ են լինել: Այդ նույնը վերաբերում
է նաև քերականական զուգաբանություններին, որոնք Մրագրում առա-
վելապես ներկայացված են ձևաբանական համակարգի հատկանիշներով:

Մրագրում առավել մեծ տեղ է տրված բառային զուգաբանություն-
ներին /534 միավոր/: Այդ զուգաբանությունների հիմքում հիմնակա-
նում ընկած է հոսկացական միավորների բառային-անվանոցական տար-
բերությունների օկզրուեքը: Զուգաբանությունների այս տիպը խիստ
առատհայտված ընդլից ունի մեր բարբառներում /Մրագրում դրանք ներ-
կայացված են 465 միավորով/: Համեմատաբար նեղ ընդգրկում ունի
բառա-իմաստային զուգաբանությունների տիպը / շուրջ 70 միավոր/,
որի սահմանափակ ընդգրկումը պայմանավորված է մեր բառապաշարի
իմաստաբանական կողմի անբավարար մշակվածությամբ:

Այսպիսով՝ Մրագրում շուրջ 750 կետերի տակ ձևակերպված են
հնչյունա-քերականական ու բառային զուգաբանություններ, որոնցից

յութաբանչյուրը կարող է դառնալ մի քարտեզի նյութ: Դրանք միտմանակ հետազոտութիւնն կտան կազմելու նաև ապելի ընդհանրական տիպի քարտեզներ, որոնք իրենց սեղ կապիտին կամբինացված են վուլթներ:

Ս. ԱՆԹՈՍՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏՄԱԿԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեզվի իրողութիւնների փոփոխութիւնը նրա զարգացման եական հետեանիշն է: Ի թիվս քերականական մյուս կարգերի, պատմական զարգացման ընթացքում փոփոխութիւնների է ենթարկվել նաև խոնարհման համակարգը:

Գրաբարն ուներ երեք եղանակ՝ սահմանական, հրամայական և ստորադասական: Առավելագույն փոփոխութիւնների ենթարկվեցին սահմանական եղանակն ու ստորադասականը: Լեզուների խոնարհման համակարգերի քննութիւնը ցույց է տալիս, որ ժամանակի հասկացութիւնը, Հ.Ա.ճառյանի բնութագրմամբ, «խախտ» է: Այսպես էր նաև գրաբարում:

Գտք է կարծել, որ գրաբարի խոնարհման համակարգում առաջին ճեղքվածքը բացեց անցյալ անկատար ժամանակը: Ահա թե ինչու. գրաբարը ստորադասականի անցյալի ձևեր չուներ, այսինքն՝ արդի ընկալմամբ, գրաբարում չկար մի առանձին պարզ ձև գրեի, կգրեի, գրելու էի իմաստներն արտահայտելու համար: Այդ նպատակի հասար գրաբարն օգտագործում էր անցյալ անկատարի ձևերը, ինչպես՝ «Եւ զմիտս եթի սիրտ ուրուք աւնոյր և ուտե՛ր՝ ուչ վնասե՛ր» /Եղեիկ, Եղե ազանդոց/: Համարանութիւն և ընդհանրացման օրենքով ներկայի ձևերն էլ սկսեցին օգտագործել ստորադասականի իմաստով՝ «Յորժամ արգելու և փակե զամենեանս» /Եղիշե, Վասն Վարդանայ.../: Գտնի որ ներկան և

անկատարը նաև ստորագրողների իմաստով էին գործածվում, ուստի անհրաժեշտությունը զգացվեց ներկայի և անկատարի նոր ձևեր գտնելու: Միջին հայերենը արժեքավորեց կու մասնիկը, որ ներկա-անկատարի սահմանափակող մասնիկը դարձավ, իսկ գրաբարյան ներկա-անկատարը ստորագրողների, արդի ըմբռնմամբ՝ ըղձակների ձևեր դառնալով՝ գործածությունից դուրս մղեցին գրաբարյան ստորագրողների ձևերը:

Այս նույն պատճառով տարբեր լեզվամիտածությունների հիմքերի վրա ուրվագծվեցին մեր բարբառների գլխավոր մյուս ճյուղերը /Ում, Ել/:

Գրաբարյան ապառնի և անցյալ դերբայներով կազմվող բառադրյալ ձևերը հետագայում տվեցին մեր ապառնի և վաղակատար ձևերը /գրեւոց, եմ - գրելոյ եմ - գրելու եմ, գրեալ եմ - գրել եմ /: Իսկ ած, ուած վերջավորությունները բառերի բայական ընկալումը առաջ բերեց հարակատար ժամանակի ձևերը: Սրանց ավելացնելով գրաբարի անցյալ կատարյալի գրեթե չփոփոխված ձևերը՝ կոտանաց միջին հայերենի, արդի արևելահայ և արևմտահայ գրականների սահմանական եղանակի ժամանակները բայականները:

Գրաբարի ստորագրողական ձևերի՝ գործածությունից դուրս կալուց հետո, միջին հայերենի շրջանից սկսած նախկին ներկա - անկատարը դարձան ըղձակների ձևեր, ինչպես՝ «Ես ձագ ծիծեռնիկ պիտեի, զօրն ըզքո տուն մտնուի խառնի / Նահապետ Զուլալ /: Մյուս կողմից՝ միջին հայերենյան ներկա - անկատարի կու մասնիկով նորակազմ ձևերն սկսեցին օգտագործվել նաև արդի ըմբռնմամբ՝ պայմանականի իմաստով, ինչպես՝ «Ահա փութով կու կատարի կամք իմ /, Վարդան Այգեկցի /: Ի դեպ, այսօր էլ արևմտահայ գրականում կը գրեմ և ներկա է /գրում եմ /, և պայմանական /կգրեմ /: Իսկ հարկադրականի պիտի կամ պետք է եղանակիչով ձևերը մեր հին լեզվի պիտոյ է... ձևի շարունակությունն են՝ փոքր-ինչ փոխված: Այսպես կազմվեցին նաև ըղձական,

պայմանական, հարկադրական եղանակների բաժանմամբ:

Իսկ ինչ վերաբերում է գրաքարի համառոտեան, ապա քիչ փոփոխութիւններով ավանդվեց միշին հայերենին ու մեր նոր գրական լեզուներին:

Դ.Ն. ՇԱՆՈՒՆՑ

ՀԱԿԱԴԻՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱԿԱՆԻՇ

ՔԱՌԵՐԻ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լեզվի համակարգային բնույթը բացահայտող երևույթներից մեկը նրա տարրերի հակադրելի լինելն է: Այս տեսակետից կարևոր է նրա բառային փակ համակարգերի առկայութեան փաստը: Այսպէս. քերականական միւսույն արժեք ունեցող միավորների շարքում կան լի է առանձնացնել տեսակէտ երկու բառերից կազմված փակ խմբեր, ինչպէս՝ մոտիկ-հեռու, հաճելի-տհաճ, վաճառող-գնորդ, ավետիս-բոյ, ցայտ-այտուհեա, շատ-քիչ և այլն, որոնք արտահայտում են միանգամայն հակադիր իմաստներ: Այդ բառերն ընդունված են անվանել հակառիշ բառեր

2. Հաճախ արտաբանական հակադրութեանը լեզվում իր արտահայտութեանն է գտնում հակադիր իմաստ արտահայտող բառերով, այսինքն՝ արտաբանական հակադիր հասկացութեաններն անվանվում են հակառիշ բառերով: Այս հանգամանքն առիթ է տվել որոշ լեզվաբանների առջ քաշելու այն հարցը, թե հակառիշ բառերի հաւերութեանը, նրանց հակառիշութեանը, լեզվաբանական, թե՞ արտաբանական բնույթ ունեն: Ոմանք գտնում են, որ բառային հակառիշութեանը արտալեզվական բնույթ ունի, որ այն, ինչպէս իմաստաբանական այլ կարգեր, սոսկ արտաբանական քննութեան արդեանք է¹, կամ՝ հակառիշ բառերի

քննութիւնը պահանջում է տրամաբանական սկզբունքներ:

3. Ընդհանրապէս որոշ կապ է հարաբերութիւն գոյութիւն ունի տրամաբանական հասկացութիւնների և դրանք անվանող բառերի միջև. շատ լեզուների համար ընդհանուր հակառիշների տրամաբանական տարբեր հիմնավորվում է այն պարզ օրինաչափությամբ, որ կան համընդհանուր հասկացութիւններ, ինչպէս լույս-խավար, շաբաթ-գաղտնիք, ներս-դուրս, վերելք-վայրէջք, տաք-ցուրտ, որոնք յաւերթանշյուր լեզվում ունենալի արտահայտութիւն են ստանում: Բայց շատ հաճախ հակադիր հասկացութիւնները կոնկրետ լեզուներում իրենց համապատասխան արտահայտութիւնը չեն գտնում հակառակ իմբերում հեռավար պատճառներով:

ա/ հայտնի է, որ եթե անհամասեղելի հասկացութիւնները հակադիր են, ապա պետք է տրամաբանական շաբթի ծայրագույն անդամներ լինեն, որոնց միջև հնարավոր չի թուրապահել միշին անդամը, իսկ եթե հակասող են, ապա պետք է ունենան և և ոչ ոչ հարաբերութիւնը: Հակառակ շաբթի շատ խմբերում դժվար է տեսադրել տրամաբանական անսակետից միշին անդամ: Օրինակ, հնարավոր չէ պատերազմ-խաղաղութիւն հակառիշ բառերի իմաստները պատկերել որպէս որևէ շաբթի ծայրային անդամներ: Կան նաև անանցման և բառաբարդացման միջոցով առաջացած համարման հակառիշ բառեր, որոնք որևէ շաբթի ծայրային կետեր չեն, քանի որ նրանց միջև ևս հնարավոր չէ տեսադրել այդ նույն շաբթի երրորդ անդամը: Հետևապէս և և ոչ ոչ հարաբերութիւնը ևս չի համապատասխանում հակառակ շաբթի հարաբերութիւն ունենցող բառերին:

բ/ յաւերթանշյուր լեզու հակառակութիւնն արտահայտում է տարբեր հնարավորութիւններով: Օրինակ՝ շատ դժգոհութիւն հակառակ կան խմբերի մեջ մտնող անդամների թիվը կախված է հակադիր և հա-

կառուց հասկացութիւններէ բնույթից, լեզվի մէջ դրանց արտահայտման եղանակից: Հնարավոր է, որ արտաբանական տեսակետից հակադիր անգամը լեզվում հանդես չգտ որպէս առանձին միավոր՝ բառական ինքնութեամբ արժեքով, այլ հանդես գտ լեզվական այլ հնարավորութիւններով, ինչպէս նկարագրական, ձևաբանական և այլ եղանակներով:

զ/ բացի բոլոր լեզուների համար ընդհանուր հասկանիշ բառերից, կան շատ թվով բառեր, որոնց հասկանալիութիւնը հանդես է գալիս ոչ միայն տվյալ լեզվում առհասարակ, այլ մինչև իսկ տվյալ լեզվի ժամանակի տվյալ հասկանում, տվյալ կանոնական համակարգում:

4. Այս տեսնից կարելի է անել հետևյալ եզրակացութիւնները.

ա/բառի իմաստների արտաբանական և լեզվաբանական դիտարկման, նրանց հարաբերութիւնների քննութիւնն դեպքում պետք է տարբերել ուսումնասիրութիւն հիմնական նպատակը.

բ/բառական հակառակման խմբերը բառական այլ խմբերից առանձնացվող լեզվաբանական գործոններ են: Դրանց քննութիւնը պետք է կատարել լեզվաբանական սկզբունքով՝ հենվելով տվյալ լեզվի հակառակման խմբերի տարբեր յուրահատկութիւնների, բառապաշարի և իմաստային համակարգում նրանց հանդես բերած առանձնահատկութիւնների վրա:

Ա.ԽԱՋԱՏԻՅԱՆ

ԲԱՅԱԿԱՆՋԱԿԱՆ ՀԵՋԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

1. Խոսքը, որպէս լեզվի իրացման միջոց, ունի արտահայտման երկու ձև՝ բանավոր և գրավոր: Բանավոր խոսքը բնորոշվում է մի քանի առանձնահատկութիւններով, որոնք պայմանավորված են խոսողութիւն իրադրութիւնմբ, հնչեղանքով և մի շարք այլ լեզվական ու

հարալեզվական գործունեություն:

2. Խոստովությունը նպատակադրման տեսակետից կարելի է առանձնացնել հաղորդակցման մի քանի հիմնական տիպեր՝ հաղորդում, հարցում, հրաման / նաև հորդորանք / և բացականշում:

3. Բացականշումը, որպես ինքնուրույն հաղորդակցական տիպի առանձնացումը, սակայն, առարկություններ է առաջացնում մի շարք լեզվաբանների մոտ, քանի որ խոսքի նպատակադրման տեսակետից բացականշումները չունեն որոշակի նպատակ, այնպես, ինչպես պատմողական կամ հարցական բնույթի նախադասությունները:

Քերականական ձևավորման տեսակետից ևս բացականշական նախադասությունները չունեն իրենց հստակ արտահայտման միջոցները: Նրանց հիմնական արտահայտման միջոցը հնչերանգն է, որին միանում են որոշ բառ-քերականական ցուցիչներ / ձայնարկություններ, մասնիկներ և այլն /:

4. Հայ լեզվաբանություն մեջ բացականշումների, ինչպես և մյուս բնույթի նախադասությունների շարահյուսական դասակարգումը մանրամասն շարադրված է Ս. Աբրահամյանի «Ժամանակակից հայերենի քերականություն» աշխատության մեջ, որտեղ նշված են ներառում արտահայտված իմաստային և զգացական դաշտերը:

5. Հնչյունաբանական ուսումնասիրությունների համար նպատակահարմար ենք գտնում դասակարգումը կառուցել ըստ հաղորդակցական տիպերի: Այս բաժանումը, նոր չլինելով հանգրձանագծում է իրողությունների այլ կողմ և զերծ է պահում որոշ հակասություններից, որոնք անխուսափելի են շարահյուսական դասակարգման ժամանակ:

6. Նրբ հարցին մասնում ենք հաղորդակցական տեսանկյունից, բացականշումները կարծես չունեն որոշակի նպատակ ու իմաստ / օր., ինչ գեղեցիկ առավոտ է /: Պատահական չէ, որ շատ լեզվաբաններ բաց-

կանչումները համբուժում են հուզումների ու զգացմունքների արտա-
հայտում՝ տվյալ իրողություն կամ փաստի նկատմամբ: Սակայն ըստ
բացականչության գործառնության՝ փաստը կամ իրողությունը ներկա-
յացվում է ոչ սովորական ձևով, այլ լսողը մասնակից է դարձվում
այն զգացմունքներին, որոնք հուզում են խոսողին: Այս հնչյունական
սակարկակի այն կողմն է, որի մասին դեռևս խոսում էր Տրուբեց-
կոյը, որպես խոսքի /հնչյունների/ ասելայտիվ և էքսպրեսիվ կողմեր:
Այս տեսակյունից մոտենալով հարցին կարելի է գտնել բացականչում-
ների տեղը մյուս հաղորդակցական տիպերի շարքում և առանձնացնել
ընդհանուր բացականչական տիպի նախադասություններ, որոնք իրենց
ընդհանուր թով ինքնուրույն են և բնութագրում են յուրովի հնչերանգով:

Ս.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՐՑՄԱՆ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հարցական նախադասությունները լեզվի շարահյուսական համա-
կարգում կարևոր դեր են կատարում: Այդ պատճառով էլ նրանց ու-
սումնասիրությանը զբաղվել են շատ լեզվաբաններ:

Անցյալի հալ լեզվաբանները /մինչև Հ.Անառյան և Մ.Արեգյան/
հարցման ուսումնասիրությանը առանձնակի խորությամբ չեն զբաղվել:
Հարցմանը նրանք անդրադարձել են այնպես, որ քանակ այն կապվել
է պարզակի և առաջանդության հետ: Սակայն հարկ է նշել, որ Ա.Այդըն-
յանը դրել է հարցական նախադասությունների հաղորդակցական կատարողի
փոփոխականության հարցը: Հարցման ուսումնասիրությանը նոր որակ
է ստանում Հ.Անառյանի և Մ.Արեգյանի աշխատություններում, որոնք -
հարցատեսակների տարբերակման հիմքում դնում են ինչպես հարցման
իմաստը և գործառնությունը, այնպես էլ հարցմանը արվող քառասուն-
ների ընդլրդը: Հարցման զուտ իմաստային վերլուծություն է կա-
տարում Վ.Առաքելյանը, որը վեր է հանում այն հիմնական իմաստները,

որոնք արտահայտվում են հարցումով: Իսկ Ս.Աբրահամյանը հարցման կանոցվածքային տարրերի հետ մեկտեղ քննում է նաև նրա մի շարք զգացական և հուզական նրանգներ: Ի տարբերություն հայ մյուս լեզվաբանների, Գ.Ջահուկյանը կատարում է հարցման բաշխական և գործառական մեքենաման վերլուծություն: Նա առանձնացնում է հարց-ման ներկայի հիմնական տեսակ, որոնք տարբերակման հիմքում թնում է հարցական նշանի առկայությունը և բացակայությունը:

Ռուս խոշոր լեզվաբան Գեշկովսկին հարցման ուսումնասիրու-թյան գործում կարևոր դեր է հատկացնում հնչերանգին, նշելով, որ այն դեպքում, երբ հարցման շարահյուսական միջոցները թույլ են արտահայտված, ապա կարևոր դեր է կատարում հնչերանգը և հ-կառակը:

Հարցման ուսումնասիրության գործում զգալի ավանդ են ներդրել հնչյունաբան-լեզվաբանները /Շեվյակովա, Շախրագովա, Դուրովսկի և ուրիշներ/, որոնք հարցման ուսումնասիրությանը կապում են նա-խորդող բնագրի և որոշակի իրադրության հետ: Նրանք եական դեր են հատկացնում նաև լոսոսդի հազարակցական նպատակադրմանը:

Հարցման ուսումնասիրությանը զբաղվել են նաև արտասահմանյան շատ լեզվաբաններ: Այսպես, Ֆիբբասի, Եսկերսենի և Տենյերի հետազո-տությունները հիմնված են հարցման մեջ եկած հայտնի և անհայտ տար-րերի փոխարեներության վրա: Ֆիբբասը հարցման հետազոտման գոր-ծում կարևոր տեղ է հատկացնում հարցական բառերին և բայի ժամանա-կա-նշանակային ցուցիչներին: Նշելով, որ նրանք հարցման մեջ կա-տարում են բացատրական և ցուցական դեր: Տենյերը ուշադրությունը բևեռում է հարցման գտարկ և լիթը միջուկների վրա և առանձնաց-նում միջուկային ու կապակցային հարցատեսակներ:

Բալիսները հարցումը համարում է բազմաբնույթ, բազմաթիվ և բարդ մի ամբողջություն: Ըստ նրա՝ այդ բարդ ամբողջության հիմնական և բազկացուցիչ առերևույթը չորսն են. 1/հարցական բաշխում, 2/ հարցական շարահյուսություն, 3/ հարցական հնչերանգ և 4/ հարցական ժեստ: Ելնելով վարժանքային հոգեբանության դրույթներից՝ նա ճիշտ չի սահմանում հարցումը և հանգում է սխալ եզրակացությունների, որովհետև հարցումը համարում է մարդկային վարքի դրսևորման ձևերից մեկը: Այնուհանդերձ հաշի է նշել, որ Բալիսների այս տեսական դրույթը չի արտացոլում հարցական նախադասությունների նրա կառուցման կուսակամությունը և սահմանափակության մեջ:

Այժմ էլ հարցանքն ուսումնասիրության նկատմամբ լեզվաբանները ցուցաբերում են մեծ հետաքրքրություն, քանի որ հարցական նախադասությունները հազորգակցական պրոցեսում կառարում են շատ կարևոր գեր:

Ի. ԹԱԽԱՆՅԱՆ

ՇԱՐԱԽՅՈՒ ԸՄԲՈՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ

Լեզվաբանության մեջ հնչյունական շղթան հատույթավորում է երկու մակարդակներով՝ հնչյունաբանական և հնչույթաբանական: Նման բաժանումը, ինչ խոսք, ունի իր մեթոդական հիմունքները: Մեր ուսումնասիրության ժամանակ մենք ելնում ենք հնչյունաբանության և հնչույթաբանության սերտ փոխաբերությունից, ուստի արտասանվածքի հատույթավորման համար առանձնացնում ենք հետևյալ միավորները՝ վանկ, բառ, շարույթ, նախադասություն: Եթե այս շարքի եզրային անդամները ունեն հատույթավորման քիչ թիվ շատ կայուն սկզբունքներ, ապա հնչյունական շղթայում բառի կամ շարույթի սահմանները ունեն



որոշակի անորոշութիւնն: Արտասանվածքում գործառնող հնչաբանը հաճախ չի համընկնում բառի բառարանային ձևին, իսկ շարույթը որպէս շարահարկ սակայն—իմաստային միավոր հնչուներէի գծային շարքում չունի որոշակի սահմաններ, այսինքն Նրա ձևական արտահայտութիւնը սերտորեն կախված է հաղորդման բովանդակութիւնից: Այս պատճառով նույն հնչուէն—յան շղթան կարող է բաժանվել տարբեր շարույթներէ: Շարույթի ամբողջացմանը նպաստող շեշտը կոչվում է շարույթային: Շարույթի առանձնացման համար կարևոր դեր ունի նաև դադարը, որը արտասանվածքում արտահայտվում է ինչպէս ընդհատմամբ, այնպէս էլ երկու շարույթներէ հատման վայրում մեղեդու փոփոխութեամբ:

Հայերենի արտասանական շղթայում շարույթային շեշտի ֆիզիկական բաղադրիչները բառային համեմատութեամբ խիստ ցայտուն դրսևորումներ չունեն: Շարույթային շեշտի ընդգծումը շարույթի մեջ մտնող բառային միավորներէ շեշտերի թուլացման հետևանք է, մինչդեռ արտաբանական կամ զգայական շեշտերը ունեն ընդգծված որակական հասկանիչներ արտասանվածքում դրսևորվող բոլոր շեշտակիր միավորներէ համեմատութեամբ:

Տ.Մ. ԱՎԵՏ ԻՍՅԱՆ

ԱՄԱՆՅԱՆ ԵՎ ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվի շարահարկ սակայն իրողութեանն ձև մասնավորապէս ղուգորդելիութեան հարցերը քննելիս, առանձին հետաքրքրութեան է ներկայացնում այն խնդիրը, թե բայական ծագում ունեցող ածանցյալները պահպանում են արդյոք հիմքերի խնդրական ունակութեանն: Մենք քննարկում ենք գոյական ածանցյալները:

1. Միւսումնայն բայից զանազան գոյականակերտ ածանցների շնորհիվ սերվում է գոյականների մի ամբողջութեան, որը մենք կոչում ենք

բառաբոլոյն:

2. Բառաբոլոյնի յաւերաթանշյաւը տնդամ հիմք-բայի հետ յաւերա-
տեսակ իմաստային կապի մեջ է գտնվում:

3. Այդ անասցալները պահպանում են հիմք-բայի խնդրառական
աւակութիւնները, բայց նրանցից և ոչ մեկը ամբողջովին չի պահ-
պանում այդ աւակութիւնը: Որոշման հետաքրքիր է, թե ո՞ր անասցով
սերված անասցալը ինչքանով է պահպանում բայական այդ հատկու-
թիւնը:

4. Առաջագրված հարցին պատասխանելու համար վերցրել ենք բայերի
երկու խումբ՝ ներգործական և չնդգոյ: Ըստ որում վերջինսերից ընդ-
գրկել ենք "ասացական բայեր" իմաստային խումբը միայն:

5. Ներգործական սեռի բայերի համար, որոնք, ինչպես դժվար
չէ ենթադրել, աւակազն երկարժույթ են, բայց-բայանուն փոխակերպման
ժամանակ ի՞նչ հարցին պատասխանող տնդամը դրվում է սեռական հոլո-
վով՝ նա երեսներին խաւալիք բաժանեց → երեսներին խաւալիքի բա-
ժանումը:

6. Միշտ չէ, որ հետբավոր է լինում նման փոխակերպումները
կատարելիս դիմել գոյականակերտ անանցներին և նրանցից թեկուզ տ-
մենատարածվածին՝ ում անանցին, որովհետեւ այդ ձևերը հաճախ բավա-
կանին արհեստական են և ոչ կիրառելի: Այսպիսի դեպքերում օգնու-
թյան է գալիս ը-ն, որ նման պայմաններում սահմանափակում չունի՝ խա-
ղալիք բաժանելը, պարզև/ի/ հանձնելը, գիրք նվիրելը և այլն:

7. Ասացական բայ-հիմքից սերված գոյականները մեծ մասամբ
պահպանում են սերող բայի խնդրառութիւնը՝ մասնավորապէս պարտա-
դիր կերպով պահելով մասին կապով տնդամի նկատմամբ
հիմք-բայի խնդրառութիւնը՝ խոսեց... մասին, խոսքը... մասին,
զեկուցեց... մասին, զեկուցումը... մասին և այլն:

8. Հետաքրքրություն են ներկայացնում նաև հղանակավորող բայ + անորոշ դերբայ կապակարգում հղանակավորող բայի բայ → բայանուն փոխակերպումից հետո անորոշ դերբայի կրած փոփոխությունները: Վերցնենք հետևյալ օրինակը՝

Նա փափագում է մասնակցել ա/ Նրա փափագը մասնակցել է:
բ/ Մասնակցելու նրա փափագը:

Բերվող օրինակները քննելուց հետո գալիս ենք հետևյալ եզրակացու-թյան՝ ա/ բայ → բայանուն փոխակերպման հետևանքով անորոշով դեր-ված անդամը կարող է անփոփոխ մնալ:
բ/ Անորոշ դերբայ բաղադրիչը հայերենին հատուկ հուղվելու էր ընդունակությամբ զգալիորեն ազդում է ստացված փոխակերպի շարա-հյուսույթյան վրա, իսկ ինքը ուղիղ խնդրից է վեր ածվում սեռակա-նով դրված ուղղչի, նախադասության մեջ գրավելով նոր պաշտոնի վայել դիրք:

Դ. Լ. ՈՒՌՈՒՄՅԱՆ

Ճ - ԽԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1⁰ Դիցուք X -ը որևէ բառաբանի տարրերից կազմված ոչ դատարկ շղթա է: Եթե X բազմությունում $|X \ni X|$ ունենք կամավոր U բինար հարաբերություն աշխատեմ, որ $\langle X, U \rangle$ գրաֆը հանդիսանում է ծառ, ապա տվյալ X -երի համար դա շարահյուսական կախվածու-թյունների հարաբերություն է, իսկ $\langle X, U \rangle$ -ը՝ կախվածությունների ծառ:

Կախվածությունների ծառը կարելի է համարել նախադասության շարահյուսական կառուցվածքի նույնական $/agdek\ b\ a\ m/$ օրոպապատ-կերումը, եթե գոյություն ունեն ինչպես իմաստային, այնպես էլ ձևական սահմանափակումներ, որոնք արտահայտված չլինեն կախվածու-

թյունների ծառի վրա:

Հետևաբար, նախադասության իմաստի կամ շարահյուսական կառուցվածքի յուրաքանչյուր փոփոխություն իր հետ կրքերի կախվածությունների ծառի համապատասխան ձևափոխություն և, հակառակը, ծառերի համարժեք ձևափոխությունների շնորհիվ կարելի է ստանալ համանիշ նախադասությունների բազմություն:

2^o Եթե ընտրենք կանոնավորված եռյակ $\mathcal{T} = \langle \mathcal{V}, \Pi, \Phi \rangle$ և անվանենք $\mathcal{T}$ -քերականություն, որտեղ $1/\mathcal{V} = \mathcal{V}_1 \vee \mathcal{V}_2$ ծառերի ոչ դատարկ բազմություն է, $\mathcal{V}/\Pi$ -ն $\mathcal{V}_1$ և $\mathcal{V}_2$ ծառերի համարժեք փոխարինման թուլատրելի կանոն է, $\mathcal{V}/\Phi$ -ը $\mathcal{V}_1$ և $\mathcal{V}_2$ ծառերի հանգույցների համարժեքում լինող հայտանիշներ, ապա այն կարելի է կիրառել տրված կախվածությունների ծառի վերլուծության կամ համարժեք ձևափոխությունների համար:

3^o Կախվածությունների ծառերի համարժեք ձևափոխությունների համար $\mathcal{T} = \langle \mathcal{V}, \Pi, \Phi \rangle$ քերականությունը կիրառում ենք հետևյալ կերպ.

Եթե տրված է կախվածությունների որևէ ծառ, ապա նախ այդ ծառի վրա փոխարին ենք աշխարհի մի ենթածառ, որն իդոմորֆ է $\mathcal{V}_1$ -ծառին, ապա հետևաբար համարժեք փոխարինման թուլատրելի կանոնի համաձայն այդ իդոմորֆ ծառը փոխարինում ենք $\mathcal{V}_2$ ծառով:

Նկատենք, որ եթե $\mathcal{V}_1$ և $\mathcal{V}_2$ ծառերը պատկանում են միևնույն լեզվահամակարգին, ապա ձևափոխման արդյունքը կլինի լեզվատաշիւ նախադասությունը համանիշ նախադասության կախվածությունների ծառը, իսկ եթե դրանք պատկանում են տարբեր լեզվահամակարգերի, ապա՝ ելակետային նախադասության համարժեք նախադասության կախվածությունների ծառը երկրորդ լեզվահամակարգում:

4^o Կախվածությունների ծառերի վերլուծության համար $\mathcal{V}_2$ ծառերը կը նվազանան որպես չափանշային ենթածառեր, որոնցից կազմվում են չափանշային կախվածությունների ծառեր: Տրված կախվածություն-

ների ծառի վերլուծութան համար անհրաժեշտ է համարժեք ձևափոխու-
թյունների միջոցով այն հանգեցնել որևէ չափանշային կախվածություն-
ների ծառի:

Ս. Կ. ՏԻՈՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆՆԻ ԿԱԳԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԻ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

1. Գոյություն ունի կախվածության ծառերի միջոցով լեզվի
նկարագրման եղանակ, որ ծառի յուրաքանչյուր հանգույցին համապա-
տասխանում է նախադասության որևէ անդամ, իսկ աղեղին՝ նրանց միջև
եղած շարահյուսական հարաբերություններ /1/: Նախադասության նման
նկարագրման դեպքում առանձին հետաքրքրություն է ներկայացնում կա-
պերի դիրքը կախվածության ծառի վրա և նրանց հարաբերությունները
ծառի մյուս հանգույցների հետ:

2. Որսումնասիրությունները ցույց են տալիս, որ մասնակապից
հայերենում կապերը նախադասության մեջ հանդես են գալիս հետևյալ չորս
դիրքերում՝ տալով ճիշտ պրոյեկտիվություն՝

1. $A \text{xxx} \odot \text{xxx} B$ "Գնացի դեպի տուն":
2. $A \text{xxx} B \text{xxx} \odot$ "Դրեցի սեղանի վրա":
3. $\odot \text{xxx} B \text{xxx} A$ "Առանց ինձ գնաց":
4. $B \text{xxx} \odot \text{xxx} A$ "Պատի վրա դրեցի":

Ինչպես և երևում է, վերջին երկու դեպքերը առաջինների շրջափառու-
թյուններն են / ինվերսիաներն են /:

* - Օգտագործում են հետևյալ պայմանական նշանակումները.

A - բայ - ստորոգյալ

B - լրացում

$\odot$ - կապ

xxx - այլ հնարավոր լրացումներ, որոնց առկայությունը կամ բացա-

կայությունը տվյալ դեպքում չի ուսումնասիրվում:

3. Ուշադրութեան կենտրոնում ունենալով ժամանակակից հայերենի կապի ֆունկցիայով հանդես եկող բառերի տեղը կախվածութիւն ծառերի վրա և նրանց շարահարկական ազդեցութիւնը կախյալ բառի ձևի վրա, տեղացեշտութիւնն առաջացավ կատարել հետևյալը.

ա/ պարզել գաղաթի և կապի միջև հարաբեր հարաբերութիւնները,

բ/ վեր հանել ժամանակակից հայերենում կապի ֆունկցիայով կիրառվող բառերի ցանկը և, վերջապես,

գ/ ուսումնասիրել այդ ցանկի յաւաքանշումը միավորի շարահարկական ազդեցութիւնը կախյալ բառի ձևի վրա:

4. Յուսց է տրվում, որ վերը նշվածը կատարելուց հետո կարելի է ստանալ գաղաթ-լրացում հարաբերութիւնները նկարագրող սահմանափակ թվով կաղապարներ:

Н.А.МЕЛИКЯН

ЧАСТОТНЫЙ СЛОВАРЬ ТЕЛЕГРАММ

Исследуемый материал - 3000 телеграмм.

В работе приводятся два частотных списка:

I) частотный список, включающий примерно 1937 лексем, расположенных в порядке убывания их частот (самая большая частота - 852, самая маленькая - I) и II) частотный список различных (назовем их формульными) обозначений - даты, суточного времени, количества, а также имен собственных и некоторых других слов.

М/ S⁶ Harper K.E., Hays D.G.

The use of machine in the construction of a grammar and computer programme for structural analysis. Proceedings of International Congress on Information Processor, UNESCO, Paris, 1959.

Оба указанных списка обслуживают текст (точнее говоря, совокупность исследованных телеграфных текстов) длиной примерно в 23970 словоупотреблений.

Рассчитаны количественные характеристики с целью установить: а) покрываемость совокупной длины текстов лексемами с определенной частотой;¹ б) покрываемость совокупной длины текстов различными частями речи; в) не случайную близость тех или иных количественных данных, полученных для каждой тысячи из исследуемых трех тысяч телеграмм.

Определяется степень близости частотного словаря телеграмм и частотного словаря современного русского литературного языка, составленного Э.А.Штейнфельдт.²

С помощью вышеприведенных данных, в статье делается попытка убедить в том, что отбор слов для словаря телеграмм и их употребление подчиняются определенным закономерностям, существующим в пределах этого фрагмента русского языка и обеспечивающим его большую или меньшую устойчивость.

Таким образом, оправдан подход к языку телеграмм как к объекту функциональной стилистики.

В.М.ГРИГОРЯН

ОБ АРМЯНСКИХ ПРИЧАСТНЫХ (ДЕРБАЙНЫХ) ФОРМАХ

1. В работе рассматриваются дербайные формы, известные под названием *երբայ, անգիր, անգիր, անգիր*. Рассмотрены

1. Так, 40 лексем с частотой от 852 до 100 составляют 49% совокупной длины текстов, тогда как 1024 лексемы с частотой 1 - всего 5%.
2. Э.А.Штейнфельдт. Частотный словарь современного русского литературного языка. Таллин, 1963 г.

ние ведется в синтаксическом аспекте (в пределах явления современного армянского языка в его восточной литературной разновидности).

2. *Արդ* анализируется на трех уровнях: как единица, подчиненная модальному глаголу и функционирующая как глагольная часть сложного сказуемого; как единица, занимающая место на присказуемом ярусе - субстантивном значении; как единица, занимающая место на одном из атрибутивных ярусов.

3. *Անոր* рассматривается в качестве единицы, синтаксически зависимой от вершины (глагола вспомогательного), и единицы, функционирующей в субстантивном значении - с точки зрения корреляции управляющих свойств между глагольной основой и ее субстантивным дериватом (с суффиксом -*ան*).

4. *Դարձանք* анализируется как единица, имеющая страдательное значение и, с этой точки зрения, этот дериват сопоставляется с другими дериватами в плане сохранения / несохранения переходности.

5. Поскольку синтаксические функции деривата *վաղանք* последовательно специализируются в пределах сказуемого, ему в докладе уделяется второстепенное внимание.

6. Особое место, с нашей точки зрения, в системе дериватов современного восточноевропейского языка занимает *անցանք*. Как представляется, он в синтаксической конфигурации с вспомогательными глаголами прошедшего времени занимает особое место в ряду глагольных значений изъявительного наклонения (*անցանքն անցանք*). Ввиду совпа-

дения формы дербая на ~~-bлнз-внлз~~ с родительным падежом инфинитива, здесь возникает ряд интересных контаминаций.

В этой связи ставится вопрос о существовании категории герундивности, аналогичной той, которая существовала в классической латыни (со значением пассивной возможности совершения действия). Отсюда - анализ словосочетаний типа ~~лнз лнлр~~ и синонимии этого дербая с адъективными дериватами на ~~-лр~~.

А.Х.МАНУКЯН

О ФОРМАЛЬНОМ АНАЛИЗЕ ГРАФИЧЕСКИХ ЧЕРЕДОВАНИЙ В ОСНОВЕ

Графические чередования, появление беглых гласных, усечение основы при словоизменении и словообразовании, характерные для русского языка, приводят к необходимости хранения в словарях (при автоматической обработке) нескольких основ для одного гнезда.

Из классической грамматики известно, что явление графических чередований наиболее продуктивно при глагольном словоизменении и словообразовании, поэтому для того, чтобы не усложнять правил поиска в словаре основ, решено задавать их для часто встречающихся типов чередований и только для продуктивных классов глаголов.

В работе сформулированы правила, в соответствии с которыми можно сократить количество некоторых глагольных основ, помещаемых в словарь основ. По этим правилам составлены блок-схемы алгоритмов для следующих типов чередований:

1) чередование согласного на конце основы

а) Т - Ч, Т - Ш, Д - Ж, Д - ЖД, С - Ш, З - Ж

(например: встретить - встречать, запретить - запрещать, убедить - убеждать, сгладить - сглаживать и др.)

б) В - ВЛ, Б - БЛ, П - ПЛ, М - МЛ (например: искривить - искривлять, углубить - углублять и др.) и

2) чередование гласной основы О - А (например: усвоить - усваивать, выдолбить - выдалбливать).

В последующем эти отдельные блок-схемы объединены в общую блок-схему алгоритма для всех вышеупомянутых типов чередований, которая дает возможность различать так же двойные чередования в основе, например: укоротить - укорачивать, выдолбить - выдалбливать и т.п.).

А.М. АРУТЮНОВ

ПОСТРОЕНИЕ СЛОВАРЯ С ДРЕВОВИДНОЙ ОРГАНИЗАЦИЕЙ

"Информационный взрыв" выдвигает на передний план автоматическую обработку текстов на естественных языках.

В связи с этим встает задача создания автоматических словарей, к которым предъявляются такие противоречивые требования, как высокая скорость поиска, большая плотность информации в единице объема, дешевизна, возможность исправления ошибок и т.п. Следовательно встает вопрос о выборе оптимального варианта, который в свою очередь, зависит от целей и назначения системы в которой используется автоматический словарь.


В настоящее время общим принципом признано деление автоматического словаря на две части, одна из которых

быстродействующая, а следовательно и более дорогая, а другая - медленная. Подобное деление основано на следующем: известно, что 50 наиболее частых слов покрывают 36% текста, 100 слов - 47%, а 200 - 57%.

Настоящий доклад посвящен выбору структуры быстродействующего автоматического словаря.

Предлагается, в отличие от принятого в настоящее время линейного расположения, распределение словарных единиц в виде дерева, что существенно сокращает время перебора при поиске. Причем, в качестве исходного, принят частотный словарь и на основе условных вероятностей, вычисленных по формуле $P(\tilde{x}_{n+1}/\tilde{x}_1 \dots \tilde{x}_n) = \frac{\sum K(\tilde{x}_1 \dots \tilde{x}_n \tilde{x}_{n+1})}{\sum K(\tilde{x}_1 \dots \tilde{x}_n)}$ строится ориентированное дерево. Использование условных вероятностей в свою очередь способствуют сокращению перебора при программной реализации. Помимо этого, вышеуказанная структура словаря дает возможность исправления следующих типов ошибок: пропуск буквы, лишняя буква, искаженная буква и перестановка пары букв, которые покрывают 80% всех ошибок встречающихся в текстах.

В настоящее время ведется разработка алгоритма составления дерева по заданному частотному словарю.



ՎՃ 04040

Պատկեր 270

Տպարանակ 150

Հանձնված է արտատպության 9/IV 1975 թ., տտրագրված է տպագրության 4/IV 1975 թ., տպագր. 1,75, բուլղ. 60x84/16:

ԳԱ Հրատարակչության էջիմանի տպարան

Σ 104.7

A $\frac{u}{55273}$

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220055273